

խորհրդաւոր է հնչում այդ կոչք, երբ հոգեոր և բարոյական աւերակները մէկ մէկու տեղի են տալիս:

Սրբազն երգիչը հիմնուելով լուսաւորչի տեսիլքի վերայ՝ այս հաստատութիւնը և ուսույ Խորան» է անուանում: Դորանով որշուած է և նորա կոչումը: Նա հիմնուած էր հոգեոր գասահարակութեան մայր լինելու, նորանից պիտի բջիկին աւետարանի լուսոյ ճառագայթները հայութեան սրտի խորքերը լուսաւորելու: Անցեալից գիտենք մենք, որ նա հաւատարիմ է մասցել այդ կոչման: Եկեղեցին հայութեան հոգեոր քաղաքակրթութեան լուսաւորութեան փարոսն է եղել միշտ: Հայի հոգեոր և մտաւոր շարժման արդիւնքները համարեա առանց բացառութեան լուսոյ Խորանի աղբիւրներից են բջիսել Դիր, մատենագրութիւն, սրբազն արուեստ, հոգեոր կեանք, այս բոլորը մեր եկեղեցու շնորհն է, որ մենք վայելելու բաղդ ունինք: Նա մեր հոգեոր վերածնութեան որորանն է եղել երբ խաւարն ու մահը մեղ կլանել են սպառնացել:

Այսօր ևս երբ լուսաւորչի հոգին մեր եկեղեցու աւերակների վերայից վերաշնութեան հրաւեր է կարգում: մենք ուրիշ ճանապարհ չունինք ընտրելու, բայց եթէ կրօնական, հոգեոր վերածնութեան ճանապարհը: Ազգերի վերակենդանութեան ճշմարիտ ճանապարհը կրօնական վերակենդանութեան ճանապարհն է: Փրկչի խօսքը՝ «Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ աւեսանել զարքայութիւնն Աստուծոյց կարելի է և ազգերին ուղղել: Կրօնն է, ճշմարիտ կեանքի աղբիւրը, \* ուրեմն և կրօնական վերածնութիւնը մի նոր և ճշմարիտ կեանքի սկիզբ: Մ'եր ներկայ կեանքը լի է վերքերով: Մ'եր կեանքը լի է հիւանդ երեսյթներով, որոնք իրենց կողմից ամենածանրն ըետեանքներ են յառաջ բերում: Հոգեոր են այդ վերքերը, հոգեոր զէնքերով էլ պէտք է դոքա ապաքինուին:

Մ'ենք մի մեծ մարտ ունինք խաւարի կործանիչ ոյժի դէմ: ուստի և մեզ զէնք է

պէտք, ոչ մետաղից, այլ Աստուծոյ հոգւով կամած: Նա աւելի սուր է և կարուելի քան երկաթն ու պողվատը: Ժամանակը ծանր է և լուրջ, իսկ մենք թեթև ենք և անհեռատես, ժամանակը հիմնաւորութիւն է պահանջում և գործ, իսկ մենք օդային ամրոցներ ենք կառուցանում և բաւեր արտասանում: Մ'եր անկեղծ համոզմամբ ճշմարիտ վերակենդանութեան աղբիւրը կրօնական վերածնութեան մէջ պէտք է որոնել: Մ'եր եկեղեցին պէտք է աւելի բարոյական ոյժ, կենսատու զօրութիւն ունենայ, եթէ մենք յուսալից մի նոր կեանք սկսել ենք կամենում:

Արդ Մայր Աթոռն է այն կեղրոնք, որ անզից հայութեան համար հոգեոր, կրօնական կեանքի մի նոր հօսանք պիտի սկսուի: «Օրէնք ի Սիոնէ եցէ», Այսեղ է հասաւատուած լուսաւորչ՝ Հայաստանեայց վերածընութեան հօր՝ սուրբ գաւազանը, որ նորա հօտին միշտ ի փրկութիւն է հոգուել: Այսեղ ևս պէտք է նորա հոգին, որ հայի վերածընութեան սկզբնաւորութեան առիթն է եղել միշտ կենդանի և միշտ գործունեայ ֆնայ: Ծոյն հոգին և այսօր սրբազն երզի բերանով Մայր Աթոռի մարանութեանն է ուղղում իւր հրաւերը: «Եկայք շինեցուք սուրբ զխորանն լուսոյ:

Դարեզին Մարկարագ.

## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մ Ե Յ Բ Շ Թ Ո Ւ.

Ամսոյս 9-ին, 10-ին և 12-ին հանդիսաւոր կերպով կատարուեցան ս. Հռիփումիլի, ս. Դայիհանելի և Ծողակաթի վանքերի տօները: Առաջին երկու տօներին ս. պատարագին ներկայ գտնուեցաւ Ազգիս Վեհավառ. Հայրապետը:

Շարաթի, ամսոյս 14-ին ս. Գրիգոր լուսաւորչի են ի վիրապէն տօնը կատարուեցաւ Մայր ատձարում հանդիսաւոր կերպով: Այդ օրը ս. պատարագ մատոց գեր. 8. Եսայի արքեպիսկոպոսը իջման սեղանի վերայ:

\* Ցես կրօնական բաժնի առաջնորդող՝ Արօնի կննատու զօրովթիւնը:

Ս. Դրիգոր Հուսաւորչի տօնին, Մայր Տաճարում, պատարագից յետոյ կատարուեցաւ մաղթանք Նոցին Կայսերական Մեծութեանց երկրորդ դատեր՝ Տատիանա Նիկոլաևնայի ծննդեան և անուանակռութեան առթիւ, որ տեղի ունեցաւ մայիսի 29-ին, իսկ մկրտութիւնը յունիսի 8-ին:

Կիւրակիւ ամսոյս 15-ին, ս. Եջմիածնայ տօնը կատարուեցաւ փառաւոր հանդիսով և խուռան բազմութեան ներկայութեամբ որոնք եկած էին թէ, երեանից և թէ շրջակայ տեղերից:

Նախընթաց երեկոյեան Նորին Վեհափառութիւնը եկեղեցական թափորով իջաւ Մայր Տաճարը:

Միւս օրը ս. պատարագից առաջ եկեղեցի իջաւ Վեհափառ Հայրապետութէ ուր միարանութեան և ծեմարանի տեսչի, ուսուցչաց և աշակերաների ներկայութեամբ Հայրապետական մաղթանք կատարուեցաւ: Պատարագը մատուցուեց իջման սեղանի վերայ պատարագին էր Դեր. Տ. Երեմիա արքեպիսկոպոսը:

Պատարագից յետոյ միարանական սեղանատանը ճաշ էր պատարաստուած բազմութիւ Հրատիրեալների համար, որի ժամանակ Դեր. Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը մի բանախօսութեամբ բացատրեց օրուայ տօնի նշանակութիւնը, մաղթելով Հայտատանեայց Մայր Աթոռին հաստատութիւն և Նորա Մեծ Դաւհակալ Տ. Տ. Մկրտիչ Կաթողիկոսին երկայն կեանք և բարորութիւն:

Օրը պայծառ էր և հրաշալի և նպաստում էր հանդիսի շքեղութեան: Պորա հետ ներդաշնակ էր և փառաւոր լուսաւորութիւնը, որով փայլում էին Մայր տաճարի Կաթուղիկէն, գաւիթն ու ծեմարանը: Ուխտաւորների հոծ բազմութիւնն երկար ժամանակ զրօնում էին տաճարի և ծեմարանի գաւթում, մինչև Վեհափառի առաջ երգում էր ծեմարանի խումբը և նուազում էր ուխտաւորների երաժշտութիւնը:

Ազուլիսի ս. Թովմայի վանքում տեղւոյն վանահայր Դեր. Դրիգոր Եպիսկոպոս Աղափի-

րեանը վեհ Հայրապետի հրամանով կուսակրոն քահանայութեան աստիճան առեց Ծեմարանի նախկին սան Նիկոլայոս Տէր Աւետիքեանցին: Նորընձայ Նիկոլայոս արեգան ուղարկուեցաւ Տաթերի վանքը ի միարանակցութիւն:

Մայր Աթոռից մեկնեցան իրանց պաշտօնաւեցերը՝

Բարեշնորչ Թագեսոս վարդապետը Տրփինիս ս. Մարգսի վանահօր և Մայր Աթոռի կալուածոց կառափարչի պաշտօնով և բարեշնորիկ վարդապետը Քիշնեւ՝ տեղւոյն կոնսիստորիայի անդամութեան պաշտօնով:

Վերապարձան ս. Եջմիածնին՝

Տփիսից՝ բարեշնոր Համազասպ վարդապետը և Շուշուց՝ բարեշնոր Մեսարով վարդապետ:

Ամսոյս 11-ին Մայր Աթոռոս եկաւ Յովնանեան—Մարիամեան օրիորդական դպրոցի Տեսուչ պ. Փիլիպպոս Վարդանեանը Վեհափառ Հայրապետին ներկայանալու և ամսոյս 16-ին վերադարձաւ Տփիսիս:

## Գ. ՃԵՄԱՐԱԿԱՆ

Մայր Աթոռոյս Ծեմարանում տարեկան քննութիւնները վերջացան անցեալ մայիս 31-ին և Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ երրորդ լարանի լիակատար գասընթացն աւարտեցին հետեւալ ինն ուսանողները.

Անդրեասեան Սարգս Մշեցի (Տաճէ.) Գեանջեցեան Աստուածատուր Շուշեցի. Եղանեան Յարութիւն Աշաջուրցի (Դաղակի). Թաւարքեցեան Վահան Մողեղցի. Թօփեցեան Յակով Անթաղցի (Կիլիկիա). Խիմակեան Սարգս Տփիսիսցի. Շահնազարիան Ասլան Հիւքւրամաղցի (Ծուշի).

Դաղար սարկաւագ Միաստեան Տառուշեցի (Դաղակի). Միքատ սարկաւագ Տէր Աւետիքեան Բարանցի (Լոռի). Ամբատ սարկաւագ Տէր Աւետիքեան Բարանցի (Լոռի).

Ամսոյս 16-ին, երկուշարթի առաւօտ, Մայր Աթոռոյս Հոգեոր Շեմարանի երրորդ լարանն աւարտող ինն ուսանողների նախաձեռնութեամբ (որոնցից երկուոր կուսակրօն սարկաւագներ) Մայր Ծածարում մատուցուեցաւ ու պատարագ ի միշտակ հանգստեան Շեմարանի Հիմնադիր Տ. Գեորգ Դ. Կաթուղիկոսի, իսկ այնուհետև Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ հանգուցեալի զերեղմանի վերայ: Հոգեհանգստի ժամանակ աւարտողներից մէկը՝ Ասլան Շահնազարեանը աւարտող Խմբի կողմից մի ճառ խօսեց, որով օրհնելով Հանգուցեալի յիշտակը յայտնեց իրանց երախտազիտութիւնը դէպի Մայր Աթոռը և նորա արժանինտիր զահակալ՝ ամենայն Հայոց Տ. Տ. Մկրտիչ Կաթուղիկոսը:

Շեմարանի Տեսի օգնական բարեշնորհ Կարապետ վարդապետը եռամսեայ արձակուրդ ստանալով՝ ուղեւորուեցաւ Ռուսաստանի համալսարանական քաղաքները իւր մասնադիտութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ կատարելու նպաստակով:

### ՏՊԱՐԱՆ Մ. ԱԹՈՒՐՅ.

Արարատի ընթերցողներին յայտնի է, որ Ազգիս Վեհափառ Հայրապետը զիտաւորութիւն ունենալով Մայր Աթոռոյս Տպարանից լոյս ընծայել Աստաւածաշունչ ու Դիբը, անցեալ 1896 թուին արտասահման ուղարկեց Տփիսիսի վանուց մայր եկեղեցու Տ. Գիւտ Քահանայ Աղանեանցին տողարանի համար նորագոյն կատարելագործուած մեքենաներ և որպարանական այլ կարեսը պարագաներ գնելու: Այդ բոլոր մեքենաներն արդեն ստացուել են Էջմիածնում և սարքուում են: Կարճ ժամանակից յետոյ այդ ամենը պատրաստ կլինի և տպարանի բոլոր մեքենաները կրանեն շոգիով: Այդ նպատակով՝ Վեհափառ Հայրապետի հրամանի համեմատ Տփիսիսից ու Էջմիածնին եկաւ արժ Գիւտ Քահ. Աղանեանցը:

### ՃԱՆՈՒՑՈՒՄՆ

Արարատի բաժանորդներին այս համարի հետ ձիբարար ուղարկուում է Ժամանակակիցների, աշխատասիրութիւն բժիշկ Վահան Արծրունու:

### ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ Մ. ԱԹՈՒՐՅ.

Արժանապատիւ Գիւտ քահանայ Աղանեանցը մի յայտարարութեամբ յայտնել է, ուեհ: Հայրապետին, որ իւր ունիցած բոլոր պատմական նիւթեալը հրատարակելուց յետոյ պարտաւորուումէ հիացչեատէ ուղարկել նուեկը Մայր Աթոռի Մատենագարանին և արգեն ուղարկել է երկու զրչագիր մատենան Սիմեոն Կաթուղիկոսի կենսագրութիւնը և «Յուցակ յայտնութեան երից զիմաւոր զործոց»:

### ՏԲԱԿԱՀԱՅՔ.

ՈՐԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐԱԲԻՒԹԻՒՆԸ.

Մատենագիրից, նախմիքներից և արեան բաղանիսներից, յետոյ Տայյատան որբեարի մնաց և այսօր Տաճկահայաստան լի է որբերի անթիւ բազմութեամբ, որ անտէր անտիրական են մնացել: Սոցա թիւը համեռմ է մինչեւ 50000 հազարի եթէ ոչ աւելի: Յայտնի են այն ջանքերը, որ լինում են օտարների կողմից հայ որբերի մաօին, որոնցից շատերն հասել են մինչեւ Եւրոպա: սակայն ամենամեծ ջանքեր են կատարուում բուն երկրուում սոցա խնամելու: Օտարի իննամբին կարու որբերը հայութիւնից հեռանալու վտանգի են Ենթարկութիւն թէպէտեւ շատերն օտարներից այդպիսի ձգուումն չունին: Աւտոյ շատ ուրախալի է տերնելու թէ Տաճկահայոց ազգային կենտրոնական վարչութիւնը իւր պատրիարքույթ մեծ թիգեր է թափուում այդ որբերին ազգային հաստատութեանց մէջ տեղաւորելու և նոր որբանցներ հիմնելու: Ամեն մի հայ պիտի միմիշարուի լսելով և կարգանով այս մասին եղած ջանքերը:

«Մասիս» (13 մայիսի) հազորդում է, որբերի խնամատարութիւնն իւր վերջին նիստի մէջ հաշիւ անելով եկել է այն կղրակացութեան թէ Ամեն: Տ. Պատրիարքին ուղարկուելիք նպաստերու կարելի կինի Անայ, Տիարպէքիրի, Ուրֆայի, Խարբերդի և Էրզրումի վանքերի մէջ որբանցներ բանալ, Որբանցները պիտի պահուեն վանքերի հասցիթներով և ստացուած նուերներով:

Աւրախալի է, որ մեր վանքերն այսօր տառել քան երբեք կոչուած են իրենց նշանակութեան, բառիս լայն և ընդարձակ իմաստով, ծառայելու: Սակայն կարիքն այնքան շատ է, որ անհրաժեշտ են երկրի բոլոր ուժերը լարել այդ նպատակի համար: Աւստի գովելի են այն հասարակութեանց, զիւղերի քաղաքների և մասնաւոր անձանց ջանքերը, որոնք այս տառապեալ ժամանակ ձեռք են մէկնուած հայի վիշտն ամոքելու:

Քիւզանգիտնի մէջ կարուում ենք, որ Նիկոմիդիոյ առաջնորդ Ստեփանոս եպիսկոպ. Յովանիկիթեանը գրով գիմել է Անդ. Ազգ. Վարչութեան, յայտա-

բարելով թէ պատրաստ է 500—1000 որբ տեղաւորի իր հոգեկոր խնամքին յանձնուած թեմերի մեջ,  
— Կզմիրի մէջ հաստատուած Ներսիսեան որբանոցների համար 30 որբ են ուղարկելու Մարաշից, որոնք շուտով ճանապարհ կրնկնեն:

— Որբոց խնամնակալութիւնն ի նկատի ունի  
Սեբաստեան և ս ընտրել յարմարագոյն կենտրոն որ-  
բերի խնամնածութեան համար, որ վաղուց ի վեր  
որբախնամ մի ընկերութիւն կայ, իսկ քաղաքի մօտ  
դանուած Ա. Խշանի վանքն որ համեմատարար կո-  
հիկ վիճակ ունի, կարող է յարմարուել մի կենտ-  
րոնական որբանոցի շրջակայ գաւառների համար:

— Ս. Պատրիարքը զրել է Արարկիրի քահանայական դասին և գաւառական վարչութեան որ ժամանակում է այնտեղ մի որբանց հաստատել և պատուիրեց, որ միջոցների և յարմարութեանց մասին իրեն տեղեկացրեն, Այսաեղ արգելն մի որբանց բացուել է Խարբերդից եկած հրահանգի համաձայն, բայց գտնուում է բողոքականների խնամքի տակ, միայն թէ չեն յարգուում Ս. Պատրիարքի շըրջարերականի պայմանները, որ տրամադրում էր հայ որբերին թղյլ տալ իրենց Լ. գդ. լեզուի հետ սովորելու իրենց մայրենի եկեղեցու դաւանանքը և փայելելու կրօնական պաշտամունքները, Այս զրժարախանութեան են վիճակուել բատ մասին և Մր. Ձէմզըրսի որբանոցի հայ մանուկները Կարնոյ մէջ, Ս. Պատրիարքի Հրամանով ըլոլոր վիճակներից 350 անոր և անպաշտպան որբեր պիտի բերուին Պօլիս, որոնք Պատրիարքարանի հովանաւորութեան ներբեց պիտի կրթուին, ար հետ սովորեն և կամ որդեգիր տրուին:

Պրիերի մասին ամենից վերջին որոշումն այս  
է՝ որ իւրաքանչիւր առաջնորդական զիճակ իւր որ-  
րանոցը պիտի ունենայ, որնը մասմբ ևս Պատ-  
րիաքարանից արուած նպաստով պիտի պահպա-  
նուին. — Անգլիաբնակ մի քանի բարեսէր ազգային-  
ներ 180 ուկու մի գումար են ուղարկել.

Էրզըումի Կարմիր վանքի մէջ արդէն մի որ  
բանց է բացուել, որին տարեկան 60 ոսկի պիտի  
կենդրոնից նպաստ տրուի: Եւր այս կարգադրու-  
թիւններով Պատրիարքարանը տարեկան 700—750  
ոսկի վճարելու յանձն է առած, որի յոյսն ան-  
շուշտ հայ ժողովրդի կարող մասի վրայ է: Այս տա-  
րաբախա վիճակին օգնելու փոյթն ու եռանդը մեծ  
է: Յիւզանդիսոնի թղթակիցներից մինը մինչև իսկ  
առաջարկում է ազգային տուր Նշանակել որ 2—3  
տարի հաւաքուի որբերի ինսամածութեան համար,  
միշտ այնպէս ի հարկ է, ինչպէս որ Նրուսաղէմի  
Ս. Յակոբայ վանքի համար եղաւ Յարութիւն  
Պատրիարքի ժամանակ: Սակայն պէտք է յիշել  
Հէնց այդ գէպքի արդինին ու հետեւանիները, և  
այն ժամանակ կիմացուի որ այդպատճակ մի միջոց կը  
դառնայ օսմանեան գաղաների ձեռքը մի այ  
գէնքը: որով կըշարունակեն հայի արդեանց վերջին  
կամիցն անգամ արեան հետ ձծերու:

ՍՈՎԻ ՎԱԼԱՆԴԻ. — ԱՀԱԵԼԻ կոտորածներից յիշով  
մշակող ձեռքերը պահասել են, դաշտերը խոսպա-  
սացել և դրսից եկած օգնութիւնը չեւ բաւա-  
կանացնում մանաւանդ որ արդէն մի քանի  
տեղեր միստիոնարները կամ արդէն կտրել են  
իրենց նպաստները կամ կտրելու վրայ են. Տայե-  
ով մի քանի տեղերից հասած նպաստառը լուրերին  
այս տարրուայ ցանքի ու բերքի մասին. Մասիս և

Բիւզանդիկոն լրագրների հալորդաններից երեսում է, որ սովի մտանգ կայ Վանայ ծովի շրջակայքում՝ այսպէս Վասպուրականի գիւղերում։ Բազեշում և Մռուշում։

«Ի՞իւղանդիքուում» կարգում ենք (17 մայիս):  
որ Բաղէշի Կրօն և քաղաք, ժողովները չկարու-  
ղանալով զոհացում տալ Հաց խնդրելու համար  
դիմոյ կարօտեալներին: Ստիպուած կինքն առաջ-  
նորդարանի գուները փակել և չեռանալ. սակայն  
Ս.Պատրիարքը կարևոր կարգադրութիւն է արի կ-  
օցնութիւն ուղարկելու համար և յանձնարարել է  
իմեալ ժողովներին: որ չփառչեն և աշխատեն որ  
առաջնորդարան դիմողներն անմսիթար ետ չգառ-  
աւան:

— Նոյն լրագիրը հաղորդում է որ Մշոյ գաշտում տեղ տեղ սովորմահ պիճակ է տիրում և կինձ գաւառակի մէջ Յ փոքրիկ աղջիկներ են մեռի։ Պատրիարքը հեռագրեց Մշոյ առաջնորդարանին որ անմիջական օգնութեան համար մի գումար է ուղարկաւմ։ որի բաշխումը մասնակցութեամբ առաջնորդարանի խառն հսկողութեան տակ պիտի առարութ ուստի պէտք է անմիջապէս հոգ տանել ոմնից աւելի կարօտեալներին օդնելու։

Կրթվածների վիճակ. — Ցայտնի է թէ ինչպէս տա-  
լիքութ առաջ մտուրք պետութիւնը նեղում և հա-  
ածում էր Տաճկահայաստանում կրթեալ գասա-  
լարզը, մանաւանդ ուսուցիչներին. Այս եթի կոտո-  
ւածին զոհ գնացին շատերը սոցանից քահանաների  
հետ ի մրասին. Թէ այս, և թէ բնակիչների կո-  
ռորածի և երկրի աւերման պատճառով Հայոց  
գպրօցները փակուեցան. Ֆողովրդի զան աղքա-  
տութեան պատճառով նուազեց արդիւնքը. «Միա-  
ցեալ Ընկերութեան», որ կոչուած է խաւար  
անկիւններում զպրոց բանալու. Չնայելով այս պա-  
ռազաներին՝ աղքատացած և թշուառացած հայ  
ժողովուրզ իւր այս օրհասական ժամին չէ մոռա-  
ռում իւր որդուց կրթութեան գործը:

Ա. Պօլսում առանձին մասնաժողով է կազմված, որ հայթայինում է գաւառների աշակերտների գրական պիտոյ քնները:

Աւումնարանական խորհուրդն ես որոշել է  
Մշյոյ, Խրզնկայի և Կիպրոսի աղքատիկ գպոց-  
երի համար գասագընքը հայթայթել և շուտափոյթ  
հասցնել: բ) Եեապիտութեան ուսումն օրիորդաց  
պրոցների համար պարտաւորիչ անելը քննել: գ)  
և. Խորհուրդը Նկատելով, որ Կ.Պոլսի գրեթե բոլոր  
Աղջ. քարժարանների մէջ հայ լեզուի աւանդման  
համար խնամք չի տարուած: յանձնեց իւր ան-  
ամսներից Յակովի Գորգէնին յատկապէս այցելել  
ոլոր Վագասին քարժարանները և հայ լեզուի ու-  
ուցման մասն ի մօտոյ քննութիւն կատարել:  
Իրահանգներ տալ և պարբերական այցելութեամբ  
ակիլ արդ Տրահանգների ծզդիւ գործարութեան  
սա պահանջման կադմական կանոնագրոյն:

Վիճակը լուսնի և դեմքի մէջ՝ Քաղաքական ժողովը  
այսօթից խորհրդաբաննի մէջ նիստ անելով նախա-  
աշխութեամբ Ամեն. Ս. Պատրիարքի և փոխ. ա-  
նենապետութեամբ պ. Տիգրան Խուտովեանի հե-  
ռեալ որոշումներն արաւ.

— Ը զրիանու պօլսի Նորընտիր առաջնորդ Գեր-  
մայնեակ և պիտիկ. Դիմոքսեանի հրաժարականը ան-

ընդունելի դատիլով՝ յանձնեց սրբազան Նախագահին գժուարութիւնները բառնալու գործը:

— Θρησκεία της οποίας η πρώτη είναι η θρησκεία της Αγίας Τριάδας και η δεύτερη η θρησκεία της Αγίου Ιωάννη του Βαπτιστή.

— Որոշեց Սեբաստիոյ ծերունազարդ առաջ-  
նորդ Գեր. Պետրոս և պիտի Թահմական յանձ-  
նել Թօքատի թեմը առ ժամանակ Հովուելու պաշ-  
տոնը:

Խառն ժողովը որոշել է Նկատողութեան չառ-  
նել Բարգուղիմես եպ. Զամշեանի և Գէորգ Ռ.  
Ա. Եթիւձեանի Հրած արականները Եցիպտոսի ա-  
ռաջնորդութեան պաշտօնին բնտրուելուց:

ՔԱՀԱՆԱՆԵՐ. — Յաւերք անմոռանալի կըմնայ  
կոտորածների պատմութեան մէջ շատ քաջարի քա-  
հանաների գործերը, որոնք դառն ժամանակներում  
իւրեանց ժողովուրդը հոգուում էին, միիթարում  
և նոցա հետ, նոցա համար նահատակուում։ Այս-  
պէս էին ամեն զաւառացիք, որոնց Պօլսեցիք և  
այլք ծաղրելով իրմիրը են անուանում։ Մինչեռ  
քաջարիներում լուսաւորուած քահանաներն արդեն  
սկսել են մեր քահանայական դասում չտեսնուած  
անկարգութիւններ և զեղծումներ անել, որով շար-  
օրինակ են դառնում ժողովրդեան և գայթակղու-  
թիւն պատճառում իւրեանց հօտին։

Դեռ նոր էր, որ Բուլղարիոյ հայ քահանաւներից մինը թողեց իւր կարգը և մասւ աշխարհականների դասը, որովհետև Ամեն. Հայոց Հայրապետը շրաբրեհածեցաւ Նորան թօղլ տալ երկրորդ անգամ ամուսնանալու, և յժմ էլ՝ ինչպէս կարգում ենք. Մասիս լրազրի մայիսի 14-ի համարում՝ Ազգ. Կրօնական ժողովը Ռոգոսությոյի առաջնորդական տեղապահի գրութիւններից տեղեկանալով թէ՝ Թէոդորոս անունով մի քահանայ աշխարհական ժամանակ երկու անգամ ամուսնացած և յետոյ քահանայ ձեռնադրուած է և երկար աստ անդ թափառելուց յետոյ Ռօգոսություն Ստեփան անունով մի կառապանի գաղտազողի պատկել է նորա մի մերձաւոր ազգականի աղջկայ հետ, որ կրօնական ժողովն ու Ազգ. Պատրիարքարանն արգելած էր, և անհյայտացել, մանրամասն տեղեկութիւն պահանջեց յիշեալ չքահանայի մասին և պատկն անվաւեր համարեց.

— Յակովը անունով մի քահանայ իւր առաջին ամուսնու մահուանից յետոյ, քահանայութիւնը Թողնելով երկրորդ անգամ ամուսնացել էր: Այս երկրորդի մահուանից յետոյ վերոյիշեալ աշխարհականացեալ քահանան անցեալ տարի Կրօն: Ժողովին էր դիմել որ իրեն հրաման տրուի վերըստին քահանայական պաշտօնը կատարելու: Ժողովը որոշել էր որ յիշեալ անձն այլևս բնաւ քահանայ չճանաչուի: Նաև ոչ միայն եկեղեցում, այլ վարժարաններում իրաւունք չունենայ պաշտօն վարելու: Սոյն քահանան այս տարի ևս կրինեց իւր խնդիրը, սակայն այս ժողովը հաստատուն մնաց Նախորդի որոշմանն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԳԵՂԱԿԱՆԻ Ի ԿՐԴԱԿԱՎՑ ՎԵՀԱՓԵԼ ՀԱՅՐԱՊԵՏ.

Կոնդակ հաստատութեան Հոգաբարձութեան Եկեղ.—Ճի. ուսումնաբանաց Աստրախանի. թ. 375:

— Յանուն Տ. Խորեն Եպիսկոպոսի Ստեփանէ, որով կարգի նա վանահայր Ա. Խաչուց Ղրիմու. թ. 377:

— Յանուն Տ. Կոստանդին քահանայի  
Կոստանեան Ալեքսանդրապօլու, որով շնորհի  
նմա լանջախտչ քահանայական. [թ. 384:

— Յանուն Տ. Մաշթոց վարդապետի,  
որով կարգի հովիւ ի վերայ ժողովրդոց բնա-  
կելոց յՈւստր քաջաքի յԱմերիկա. թ. 385:

— Յանուն Տ. Վաղինակ վարդապետի,  
որով կարգի հովիւ ի վերայ ժողովրդոց ընա-  
կելոց ի Պրովիդանս քաղաքի յԱմերիկա.  
թ. 386:

— Յանուն Սալոմէի Աւետիքեան, որով  
յայտնի զստացմանէ ի ձեռն կոնսիստորիա-  
յին ծփղեաց մի հազար ռուբլեաց ի պէտո  
սստուածահաճոյ գործոց, զորս կտակեալ է  
հանգուցեալ Տ. Կատարինէ Տ. Մովսիսեան.  
թ. 432:

— Յանուն Տ. Պետրոս քահանայի Մատ-  
նիշեան, օրով շնորհի նմա լանջախաչ քահա-  
նայական. թ. 464:

— Յանուն Տ. Յովհաննէս վարդապետի  
թաղունոյ, որով կարդի վանահայր Ս. Թա-  
գէսսի վանից Մաքուսյ. թ. 465:

— Յանուն նորին, որով շնորհի նմա  
լանջախաչ վարդապետական ականակուռ. թ.  
466:

— Βανιτεύν 8. Ρωμηίου φωρφωψέωθ  
Απειδειών, οροφ γνηρής ή μά λανδασιως φωρ-  
φωψέωτακών ακανακποτο. Ρ. 488:

— Հաստատութեան Հոգաբարձութեան  
Եկեղ.—Ճի. ուսումնարանին Հայոց ի Սորբ  
քաղաքամասին Երևանայ. թ. 507: